

ՍԱՀԱՐԱՅԻ ԶԳՆԱԻՈՐԸ ՀԱՅՐ ՇԱՐԼ ՏԸ ՖՈՒԳՈՅ

Հ. Շ. տը-Ֆուգոյ՝ արդի Ֆրանսայի ամենէն կարկառուն դէմքն է ըստ բարոյ-
յականի: Ըստ ճիւղագիր մատենագիրներու՝
հին և նոր Ֆրանսայի հինաւորաց ազնուա-
տոհմ գերդաստաններէն մին կը կազմեն de
Foucauldները: Այսպէս, 1000 թուակա-
նին ապրեցաւ Hugues de Foucauld,
որ Corniacի Excideuil-ի իշխանն էր.
ինչպէս անուանին Bernard de Fou-
cauld, տէր և իշխան Lardimal-ի, որ
եօթներորդ խաչակրութեան տուն՝ 1270-
ին նահատակուեցաւ Ստորին Եգիպտոսի
մէջ՝ Մանսուրայի ճակատամարտին, Լու-
դովիկոս Թ. սուրբ թագաւորին ըով՝ ու-
րուն զինակիցն էր:

Հետեւորդ դարերու շրջանին ալ շարու-
նակ՝ տը Ֆուգոյ գերդաստանը Ֆրանսա-
կան տէրութեան տուած է քաջ զինուորա-
կաններ, պետական մարզիկ, Արքունեաց
ազնուական սենեկապետներ, բանակի մա-
րաջախներ և բարձրաստիճան եկեղեցա-
կաններ՝ որոնցմէ անուանի են, Bayon-
ne-ի եպիսկոպոսը՝ 1470-ին, և Ալլի
եպիսկոպոսը որ 1792-ին՝ մեծ Յեղափո-
խութեան առաջին զոհերէն մին եղաւ Փա-
րիզի մէջ:

Մեր յօդուածին հերոսը Charles de
Foucauld ծնած է 15 Սեպտ. 1858-ին.
իր մայրն է Եղիսաբեթ Beaudet de Mor-
let Ալգասցի ազնուատոհմ ընտանիքէ մը
սերած:

Վեց տարեկանին փոքրիկն Շարլ որը
կը մնայ և կը յանձնուի խնամքին իրեն
տը Մորլէ պապուն՝ գրոց-բրոց այդ զի-
նուորականին՝ որ գուրգուրանքով կը հսկէ
թոռին վրայ:

Պատանին Շարլ նախ կը յաճախէ
Սթրազպուրիկի «Saint Abregast» եպիս-

կոպոսական վարժարանը մինչեւ 1872,
և այդ թուականին կ'անցնի Նանսի պե-
տական լիկէոնը, ուր թէեւ շատ ուշիմ՝
սակայն քիչ մը ծոյլ և բարկացող նկարա-
գիր մը ցոյց կու տայ: Այնչափ անառակ
որ՝ Նանսիի լիկէոնէն յետոյ յաճախած
Յիսուսեաններու դպրոցէն անշշուկ կ'աւ-
տարուի: Հուսկ, «Saint Cyr»-ի Զինուո-
րական վարժարանը կը մտնէ, ուր իր ու-
սուցիչ պետերը կը նշմարեն իր արտա-
սովոր գիւրութիւնը, և զրեթէ նոյնքան
թուլամորթութիւնն ու մեղկութիւնը, ու-
րոնք սակայն արգելք մը չէին իր արտա-
սովոր ուշիմութեան:

1878ի Օգոստոս ամսոյն, տը-Ֆուգոյ
շրջանաւարտ կ'ելլէ Saint Cyrէն, 356
աշակերտներուն 333րդը, փոխ տեղակալի
աստիճանով, և կը մտնէ Saumurի հեծե-
լագործի մասնագիտական մարզարանը: —
Լազորքի մասնագիտական մարզարանը: —
Բախտը զինքը սենեկակից կ'ընէ Vil-
lambrosa de Morès մարքիզին, որ յե-
տոյ սպաննուեցաւ Սահարայի մէջ 1896ին:
De Morès, կրակուրոց երիտասարդ մը,
հակոտնեայ հակապրութիւնն է տը Ֆուգոյի,
որ արեւելցիի պէս թուլամորթ, երազկոտ
մէկն է. այնչափ թուլամորթ որ, փոխա-
նակ իր դասընկերներուն պէս ձիով շրջ-
ջագայելու, հեծելագորական տը Ֆուգոյ
կառքով պտոյտի կ'ելլէ, ի մեծ գայթա-
զուութիւն իր դասընկերներուն և քաղաքին
բնակչութեան:

1879ին, աւարտած ըլլալով մարզա-

1. Այս կենսագրութիւնը քաղած եմ «Revue Phi-
lomatique»-ն (Ապրիլ-Յունիս) որ պարբերաբար է
Պորտուգի «Société Philomatique»-ին, որուն միակ հայ
անդամն ըլլալու պատիւն ունեցած եմ տարիներէ ի վեր:
Ե. Ս.

րանի շրջանը, փոխ-տեղակալ կը կարգուի
hussardներուն Գ հեծելախումբին որ ի
Pont-à-Mousson: Հոս է որ իր անա-
ռակ վարքն ու միսուսները այնպիսի ծանր
հանգամանք մը կ'առնեն որ, ընտանեկան
ժողովը կը գումարուի ըստ օրինաց, և
զինքը դատական խնամակալութեան մը
կը յանձնէ:

1880ին, տեղակալ անուանուած տը
Ֆուգոյ Sétif Ալժերիա կը զրկուի, ուր
իր անառակութիւնները իրենց գազաթնա-
կէտին կը հասնին, այնչափ անհանգուր-
ժելի աստիճանի մը որ, զօրախումբին հրա-
մանատար հազարապետը, թէպէտ իրեն
համակիր և ոչ խստաբարոյ պետ մը, կը
ստիպուի խստօրէն յանդիմանել իր տե-
ղակալը: Տը Ֆուգոյ սաստիկ կը զայ-
րանայ, և հրաժարականը տալով, Մայր
Երկիրը կը քաշուի 22 տարեկանին:

Բայց յանկարծ ներքին անդիմադրելի
մղում մը մեղկ ու անառակ տը Ֆուգոն՝
Սուրբի մը կը բարեփոխէ...:

1881ին ապստամբութիւն մը կը ծագի
Ալժերիոյ սահմաններուն վրայ, մոլեռանդ
մահմետական քաղաքիչ Bou-Amama-ի
զրգուսներով: Pont-à-Moussonի
hussardներուն զօրախումբը հրաման կը
ստանայ Ափրիկէ մեկնելու՝ ապստամբու-
թիւնը զսպելու համար: Այս լուրը տը-
Ֆուգոյի հայրենասէր զինուորականի սիր-
տը թունդ կը հանէ Evian-ի մէջ՝ ուր
կամաւոր աքսորական քաշուած կ'ապրի
հրաժարականէն ի վեր: Ետ կ'առնէ հրա-
ժարականը, և զինուորական զրուելով,
կը վերագրուէ զօրախումբին տեղակալի
պաշտօնը, և կը նետուի Ափրիկեան հե-
րոսամարտին մէջ:

Հիմա է որ տը Ֆուգոյ տարբեր մարդ
մը կը սկսի յայտնուիլ: Ահա՛ բանակին
վերին հրամանատար Զօր. Laperrine-ի
գնահատական տողերը անոր մասին.

«Այս գրոց-բրոց անառակ որդին կատարեալ
զինուոր, կատարեալ պետ մը կը յայտնուի, որ
ժպիտը շրթունքին ամէն վայրկեան իր կեանքը


վտանգի դնելով, ամէնուն համակրանքը կը շա-
հի, իր անձնութեամբ հանդէպ ամէնէն յե-
տին ստորադաս սպային, ամէնէն խոնարհ զի-
նուորին, և իր բնական ու բարոյական տոկու-
նութեամբ՝ ամէնէն փորձառու հին զինուորե-
րուն զմայլանքը կը խլէ: Շփացած պայազատ
գրոց-բրոցի կեանքէն մէկ բան միայն պահած
է, Արիստոփանի փոքրիկ հատոր մը՝ զոր միշտ
վրան կը պահէ: Մինչ երբեքնի եղկ ու մեղկ կեան-
քէն իբր շուայութիւն միայն գլանիկ ծխելու,
կամ բնաւ չծխելու գեղի սովորութիւնը պա-
հած է»:

Մահուան վտանգը՝ որ ամէն վայրկեան
կը սպառնայ, ամայաբնակ Սահարայի վա-
նական լռութիւնը, Սահարային պարզու-
նակ բնակիչներուն հետ հանապազօրեայ
կենակցութիւնը՝ կը մերկացնեն վերջապէս
երբեքնի անառակ որդին իր աշխարհիկ
փայլէն, և կը յայտնուի տը Ֆուգոյ նա-
խահարց բնագոյային կամքն ապառաժեայ,
բարոյական կորովն անընկճելի, որոնք ի
յայտ կը բերեն նոր մարդ մը՝ որ յան-
կարծ կ'որոշէ ճամբորդել ի Մարոք, զայն
ճանչնալու և ճանչցնելու համար իր հայ-
րենակիցներուն: — (Մարոք՝ այն ատեն-
ները հիւսիսային Ափրիկէի ամէնէն ան-
ժանօթ երկիրն էր՝ մոլեռանդ մահմետակա-
նութեան անառիկ բերդը, ուր ճամբորդել
որոշելը՝ անձնասպանութիւն որոշել կը
նշանակէր) իր որոշումն ի գործ դնելու
համար՝ տը Ֆուգոյ կը խնդրէ զինուորա-
կան իշխանութեանց հրամանը՝ որ կը
մերժուի: Տը Ֆուգոյ այս երկրորդ անգամ
վերստին կը հրաժարի և կը մեկնի ինքն
իր զլիւնն: Հիմակ 24 տարեկան է նա:
իր զլիւնն: Հիմակ 24 տարեկան է նա:

Կը մեկնի տեղացի հրեայ բարբոնիի
հագուստով ծպտեալ, «Joseph Aléman»
ծածկանունան տակ, զրպանը՝ Մարոքի դրամ
4.000 «տոչո հալաանի»¹, խոնաւաչափ
մը և անկինաչափ մը պայուսակին մէջ՝
մտքին մէջ ունենալով Ալժերիոյ մայրա-
քաղաքին մատենադարանապետ «Mac
Carthy»-ի արաբերէնի դասերն ու փոր-
ձառութեան խորհուրդները, և առաջնոր-
դութեամբ տեղացի հրեայ բարբոնի «Mar-

1. Տուրքն ոսկեգրամ 6 ֆր. կ'արժէր այն ատեն:

dochéé Abisirourի: Ոմանք կը պնդեն թէ՛ ի սէր խոնարհութեան է որ տը Ֆուգոյ Մարոքի ամէնէն անարգուած հրեայ ժողովուրդի հագուստով ծպտեալ կը ճամ:



Cliché S.té Philomathique

Սահարայի ցզնաւորը՝ Հ. Շարլ տը Ֆուգոյ (1858-1916)

բորդէ, ոմանք ալ կը յաւակնին թէ լոկ խոհեմութեան համար, քանի որ Մարոքի հրեան առեւտուրի պատրուակով Մարոքի ծակ ու ծուկէն աննշմար կ'անցնի՝ մոլեռանդ մահմետականը վարժած ըլլալով զայն ամէն կողմ նշմարել առանց վերդովելու:

Իմ խոնարհ կարծիքովս, երկրորդը աւելի ճիշտ է. տը Ֆուգոյի դարձն ու կոչման գիտակցութիւնը քանի մը տարի յետոյ է որ տեղի կ'ունենայ: Հաւանական է որ խոնարհամտութեան հմայքը զինքը զրգած ըլլայ ճամբորդելու այնպէս ծպտեալ:

11 ամիս շարունակաբար կը ճամբորդէ այսպէս ծպտեալ. 1883ի Յունիս 20-էն՝ մինչեւ 1884-Մայիս 23, այցելելով Մարոքի ամէնէն հեռաւոր ու անծանօթ անկիւնները. ճանապարհորդութիւն մը՝ որուն աշխարհագրական, աշխարհացոյցական կարեւորութիւնը ի վեր հանուած է ժամանակին անուանի աշխարհագէտ երկրախոյզ Duveyrierի տեղեկագրին մէջ, զոր այս վերջինս ուղղած է 1885ին՝ Բարիզի Աշխարհագրական Կաճառին, հետեւալ գնահատական տողերով:

«11 ամսուան մէջ, առանձին մարդ մը, դերակոմս Շարլ տը Ֆուգոյ, ինքն իր գլխուն, Մարոքի ծանօթ ճամբաներուն երկայնութիւնը կրկնած է նոր քարտէս գծելով և հիները ճշգրտով, իր նախորդներուն 689 հազարամեդր երկայնութեամբ ճամբաները տեղագրելով, և անոնց վրայ աւելցնելով 2,250 հազարամեդր երկայնութեամբ ճշգրտեալ ուղիներ, ճշտելով 45° աշխարհագրական երկայնութիւն և 49° լայնութիւն: Մեզի ծանօթ լեւներուն թիւը քանի մը տասնեակէն բարձրացուցած է 100ի: Յիշուի նոր կեանք մըն է որ կը սկսի մեզի և Մարոքի համար: Զեմ գիտեր ո՞րն է աւելի զմայլելի. հրաշալիօրէն օգտակար այս ծանօթութիւնները, թէ այս երիտասարդ ֆրանսացւոյն ցոյց տուած քաջասրտութիւնը, հայրենեաց օգտին նուիրած անձնութեանը»:

Տը Ֆուգոյի զմայլելի յօդուածները «Ուղեւորութիւն ի Մարոք» (Itinéraires au Maroc) վերնագրին տակ, և իր ոչ նուազ զմայլելի մեծածաւալ հեղինակութիւնը «Reconnaissance au Maroc», որ լոյս

տեսաւ 1887-1888ին, հեղինակաւոր իշխանութեանց զմայլական ուշադրութիւնը կը հրաւիրեն իրեն վրայ և Բարիզի Աշխարհագրական Կաճառը կը վարձատրէ զանիկա իր Ոսկի շքադրամովը: Այս մեծածաւալ գիրքը, որուն նոր տպագրութիւնը պատրաստուելու վրայ է շնորհիւ Բարիզի Աշխարհագրական և Գաղթային Գիտութեանց Կաճառներուն, տը Ֆուգոյի համբաւը կը բարձրացնէ, ոչ միայն իրր գրագէտ՝ Մարոքի գեղանկար տեսարաններուն տեղագրական ճշգրիտ նկարագրութեամբը, այլ և իրր վարպետ արուեստագէտ — գծագրիչ, այնչափ իրական և իր ձեռքովն իսկ գծուած հարիւրէ աւելի գեղատեսիլ վայրերուն ուրուագծերը:

Այս գրքին հրատարակութենէն ի վեր Մարոք ամբողջովին նուաճուեցաւ ֆրանսական բանակէն: Ըստ նուաճող բանակին սպաներուն՝ տը Ֆուգոյի գիրքը մէկ հատիկ է, և անհրաժեշտ իրր անստգիւտ առաջնակարգ առաջնորդ ուղեցոյց բանակին յառաջխաղացման:

Մարոքի ճամբորդութեան միջոցին է որ, տը Ֆուգոյի ամէնէն բարձր առաքինութիւնը՝ քրիստոնէական խոնարհամտութիւնը ցայտուն ձեւ մ'առնել կը սկսի իր վրայ, և իր դարձին գլխաւոր նախանշանը կը թուի...:

Գերդաստանին հաւատացեալ նախնեաց բնագոյնին հեռաւոր ձայնը, Ափրիկէի անապատներուն մէջ ինքն իրեն վրայ կծկուած կեանքը, միջնադարեան մտայնութեամբ համակուած հաւատացեալ ժողովուրդներու հետ շարունակեալ կենակցութիւնը, անարգուած հրեայի հագուստին ներքեւ խոնարհութեան աշակերտութիւնը, ահա բոլոր տրամաբանական զրդպատճառները դարձին տը Ֆուգոյի, որ Մարոքի ճամբորդութենէն սկսեալ թիկունք կը դարձնէ աշխարհիս ժխորին, և իր պատկանած դասակարգի կեանքին փայլունութեան և վայելքի խրախճանքներուն: Իր ճամբորդութիւնները մահմետական երկիր-

ներու մէջ կը մտերմացնեն զինքը մահմետական կրօնքին հետ, որուն հանդէպ չափազանցեալ համակրութիւն մը կը զգայ, ինչ որ նիւթական ապացոյց մըն է որ տը Ֆուգոյ դեռ կը պահէ երբեմնի անհաւատի, թերահաւատի կեանքին տպաւորութիւնն ու ազդեցութիւնը: Բայց իսլամութեան մէջ ալ միսթարութիւն չգտնելով, կը խորասուզուի հնութեան հետեւում հեղինակներուն մէջ, ուր, ըստ իր խոստովանութեան, մի միայն «ունայնոքիւն ու զգուսնք» կը գտնէ, ինչպէս կը գրէ ինքն իսկ իր յուշերուն մէջ:

Բայց, շատ հաւանական է որ, արտասովոր ազնուութեամբ տոգորուած ընտանիքին քանի մը հաւատացեալ կիներուն, իր քրոջ, մօրաքրոջ ազդեցութիւնն և բարի օրինակն է որ իրեն ցոյց կու տան քրիստոնեայ խոնարհամտութեան խորապէս միսթարիչ ճամբան, ուր կը նետուի ոգի ի բոլին, ընտանիքին խաչակիր նախահայրերուն հոգեշունչ ջերմեռանդութեամբը, հնազանդելով ներքին մղումի մը՝ որ աստուածատուր կրնայ կոչուիլ:

Տը Ֆուգոյ, թէպէտ դեռ կիսահաւատ, կը սկսի ամէն օր եկեղեցի յաճախել, ուր սրտաբուխ կ'աղօթէ «Աստուած իմ, երեկոյնքիւն ունիս, տո՛ւր որ ձանձնաւ զրեզ»:

Բարիզի վարժապետանոցէն վկայեալ յոյժ զարգացած քահանայէ մը, Abbé Huvelinէն կրօնագիտութեան դաս կ'առնէ, 1886 հոկտ. 17էն մինչեւ 1890 դեկտեմբերին, և այդ թուականին վերջնականապէս կը հրաժարի աշխարհիկ կեանքէն, և անձայն անշուշտ՝ ինչպէս միշտ, կը բաշուի Ֆրանսայի Cévennes լեռներուն մէջ Թրափեանց վանք մը՝ «Notre Dame des Neiges», որուն դռնէն դուրս կը ձգէ երբեմնի ցոփակեաց հպարտ դերակոմս տը Ֆուգոն, ֆրանսացի փառապանծ բանակին շքեղագեղատ փայլուն տեղակալը, մինչ նոր մարդ մը կը ծնի անոր տեղը, եղբայր Marie-Albéric պարզագոյն նորընծան, որ խոնարհաբար կը հնազանդի բենեդիկտեան օրինագրքին խստապահանջ կանոններուն: Քիչ յետոյ Սիւրիա

կը զրկուի՝ Թրափեանց Akbès-ի վանքը, Սուրիական անապատին եզրը, ուրկէ Ա-
փրիկէ կը մեկնի, ի Staouéli, յետոյ
Հոմ, ուր Աստուածաբանութիւն կ'ու-
սանի:

Բայց ծարաւի ըլլալով աղքատութեան
և խոնարհութեան կենաց ջուրին ծարա-
ւովը, կը յաջողի «Trappe»-ը թողու-
թոյլտուութիւնն առնել, և կը մտնէ Պա-
ղեստինի Կլարիսեանց վանքը, ուր յետին
թշուառութեան ենթակայ, կտոր մը չոր
հաց ունենալով իբր սնունդ, և ցնցոտի-
ներ հագած՝ կը խորհի, կ'աշխատի, և
կ'աղօթէ:

Այս ամայութեան մէջ է որ իր առա-
քինութեանց քաղցրութիւնը լուսապսակի
ձեւ մ'առնել կը սկսի Ֆրանսացիի արդէն
լուսաւոր դէմքին շուրջը: Հոս է որ, նորէն
ի յայտ կուգայ այս նրբաճաշակ ֆրանսաց-
ւոյն բնածին արուեստագիտութիւնը, երբ
բիւզանդական ոճով նկարիկներ կը յօրի-
նէ, յօգուտ վանքին դռնապան-քոյրերուն:

Վանքին աղքատիկ կեանքին ազդեցու-
թեան ներքեւ է որ, տը Ֆուգոյ, քահա-
նայ ձեռնադրուելու կոչումը կը զգայ:
1901 Յունիս 9-ին, քահանայ կը ձեռ-
նադրուի Պելճիքայի Verviers-ի վանքին
մայր-եկեղեցին, և կը վերադառնայ Պա-
ղեստին: Բայց վանական լուծութիւնը յա-
զուրդ չի տար այդ գործունեայ մարդուն:
Կը մտածէ որ Ֆրանսայի տարածութեամբ,
բայց մի միայն 10 միլիոն բնակչութեամբ
Մարոքի ներսի գաւառները մէկ հատիկ
քահանայ մ'իսկ գոյութիւն չունի, մինչ
կարծուածէն շատ աւելի բազմամարդ Սա-
հարայի ամբաւութեան մէջ հազիւ երկու-
տասանեակ մը քարոզիչներ կը գտնուին:

«Որով, աշխարհիս վրայ չկայ երկիր ու
ժողովուրդ մը որ այսչափ զրկուած ըլ-
լայ Քրիստոնէութեան հոգեպարար բար-
բառէն, և անոր առաքելութեան բարի
օրինակէն», կը խորհի Շարլ տը Ֆուգոյ,
որուն ներաշխարհին թաքուն խոհերն ու
իղձերը կը յայտնուին հետեւեալ օրինա-
գծին մէջ, զոր շարադրած է 1899-1901-ին,
նորահաստատ քարոզչական միութեան մը
համար¹. ահա՛ օրինագծին պատճէնը.

« 1. Պէտք է որ մեր փոքրիկ հաստատութեան
մէջ, քաղցրաբոյր խոնարհամտութեան աղբիւրը
ներքնահոս ըլլայ: — 2. Քրիստոնէականի դա-
սեր պիտի չտանք տղոց, բայց պիտի զբաղինք
անտէրունչ տղոց խնամատարութեամբը: — 3.
Հիւանդանոց պիտի չունենանք, բայց անխտիր
պիտի հիւրասիրենք մեզի դիմող հիւանդները,
կամ ոչ — հիւանդները: — 4. Որ և իցէ ժո-
ղովրդապետութեան մը վարչութիւնը պիտի չըս-
տանձնենք ենք, բայց պիտի մնանք Յիսուսի Քրիս-
տոսի եղբայրսիրութեան, գթասիրտութեան ար-
ժանի ներկայացուցիչները, ամէնուն եղբայրները,
տիեզերաց բարեկամները »:

Քիչ յետոյ, 1909-ին, Շ. տը Ֆուգոյ
պիտի իրագործէ տիեզերական սիրոյ ամե-
նախորին տենչերն ու մտածումները՝ հիմ-
նելով «Անհաւատները դարձի բերելու
Աղօթաւորներու ընկերութիւնը»², որ ներ-
կայիս, պարզապէս «Շարլ տը Ֆուգոյի,
ընկերոջ իւն»³ կը կոչուի. ճիշտ Rue Mon-
sieur փողոցին վրայ՝ ուր կը գտնուէր
երբեմն Միսիթարեան Հայրերու բացած
(1846-ին) Մուրատեան վարժարանը, 1871
փակուած, և 1928-ին վերաբացուած, այս
անգամ Սեւրի մէջ՝ Սէնի ափին:

Շարլու Մակելի

Պորտոյ

ԵՊՈՒԱՐԻ ՍԱԳՅԱՆ

1. «Union des frères et des sœurs du Sacré
Coeur de Jésus».

2. «Association de prières pour la Conversion
des infidèles».

3. «Association Charles de Foucauld».

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԶԱՆՈՒԵՍ ԶԱՆՈՒԵՍ

Կարելի չէ խօսիլ հայ մամուլին վրայ՝
առանց ակնարկելու անոր օրհասական
վիճակին վրայ: Հոգեկան ու արտաքին
ճգնաժամն է որ կ'ամլացնէ զուտ գրականն
և ուսումնասիրութիւնները:

Իսկ լրագրութիւնը կ'ապրի՝ դժբախտա-
բար իր կոչման դրժելով, քանի որ դեռ
կը շարունակէ լարել մեր հասարակու-
թիւնները կրքի և եղբայրական կուռի:

Բայց ա՛լ պէտք է ըմբռնել թէ խղճի
ծանր պարտականութիւն կը ծանրանայ
իրենց վրայ մեղմացնելու նախատինքն ու
հեզնանքը. կրթութիւնն իսկ զայդ կը պա-
հանջէ, թող թէ մեր ցեղակցութիւնը, մեր
եղբայրութիւնը, մեր աղէտները, մեր սուրբ
կրօնը: Միայն համերաշխութեամբ և սի-
ւով կրնանք պահել մեր ցեղային ու մշա-
կութային աւանդութիւնները. և այս ուղ-
ղութեամբ է որ պէտք է զրիչ շարժել:

Ինչպէս ակնարկեցինք՝ մեր պարբերա-
կան թերթերու թիւը տասանորդուած է:
Յունաստանի մէջ եղած կայծերն ալ մա-
րեցան: Սիւրիոյ մէջ դաղըցաւ «Հայ և
րիսասարդոյն» և, թէպէտ 1934-ին երեւ-
ցաւ «Հայ պատանի»-ն որ անշուշտ գովելի
է իբրեւ ազգակ հայ մշակոյթի պահպան-
ման մեր մանուկ հասակին համար, սա-
կայն լեզուական տեսակէտով շատ տկար
է և թերի. երանի՜ թէ այդ մասին աւելի
ուշ զրուէր, օրինակ առնելով ամերիկեան
«Արփի»-էն որ իր միաձոյլ ընտանեկան,
կրթական և ազգային ուղղութեամբ մէկ
հատիկ է:

Տարույս սկիզբը լոյս տեսաւ Պուէնոս
Այրէսի հայ Առ. Եկ. Հոգ. պաշտօնաթերթ
«Հայ կեդրոն»-ին իբր յաւելուած «Նոր
Սերունդ»-ը առանձին տետրակներով, և

այս օրերուս ալ Սոֆիայէն «Մրգաստան»
մանկական-պատանեկան սիրուն հանդէսը՝
որուն «հիմնական նպատակն է հայ նոր
սերունդին սիրցնել իր ազգութիւնը, հայ-
րենիքն ու լեզուն»: Եւ այսպէս ան՝ Փլով-
տիւի Միսիթարեան Հայրերու «Ուսումնա-
րան»-ին հետ պիտի կատարէ ազգանուէր
և շատ կարեւոր գործ մը:

Ուսումնահայութեան մէջ այդ ուղղու-
թեամբ շատ գովելի են «Մասիս» հրատ.
միութեան հրատարակած ազգային և միջ-
ազգային գործերէ՝ գրական-կրթական ըն-
տիր տետրակները՝ զորս անվերապահօրէն
կը յանձնարարենք բոլոր ընտանիքներուն
և հայ կրթական տուններուն:

Պարբերականներէն՝ իբր գրական կարե-
ւոր հանգրուան՝ պէտք է յիշել «Հայրենիք»
ճոխ գրական — քաղաքական բաժիններով,
«Վիւ» մատենագրական-դիւանական հա-
սուն նիւթերով, «Անահիտ» գրական-գեղ-
արուեստական բարդ նկարագրով. «Հաւ-
դես ամսօրեայ» միշտ իր մասնագիտական
գոյնով՝ թէեւ վերածուած. «Սիւն» բա-
նասիրական ուղղութեան ճիգերով. եւն:
Դժբախտաբար Կ. Պոլիս չի յաջողիր ար-
տադրել. երբ պիտի բոցավառին կայծերը
որ զմեզ կը խանդավառեն երբեմն:

Անցնինք նկատելու նախ.

ԱՆԱՀԻՏ. Թ. 5-6 (Ե. տարի) Յու-
նուար — Յունիս 1934. — Միացեալ այս
թուին մէջ կ'արժէ որ մեր ընթերցողները
տեղեկանան «Քուչակեան տաղ»-ին՝ որ ան-
կասկած սիրոյ մեծ երգչին է գործն է կա-
ռուցուածքի և պատկերներու իր ծանօթ
տարփոտ շունչով և զօրեղ գոյներով:

«Մեր դաշտեցիներ» (արձակ) և «Սպա-
սում» (ոտ.) անտիպ էջերէն են Ռուբէն